

ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ ՄԻՈՒԹԵԱՆ ԵՅԹՆԵԱԿԻՆ  
ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՄԷՋ Յայ սաշազն

Քրիստոնէական զանազան եկեղեցիներու կողմէ հաստատուած և գովելի նախանձախնդրութեամբ մը չարանակուող այս սովորութիւնը —աղօթք՝ եկեղեցիներու Միութեան համար— այս տարի ևս գործադրուեցաւ 19-26 Յունուարի ընթացքին :

Դժբախտաբար կարգ մը եկեղեցիներ, իրենց վերապահուած պատճառներով, չուղեցին իրենց մասնակցութիւնը բերել գեղեցիկ այս չարժումին : Հայ եկեղեցին, որուն ժամանըրքին մէջ խոկ տեղ է զտած քրիստոնէական միարանութեան համար մատուցուած աղօթք-մաղթանքը, «Զի միարանեսցէ զեկեղեցի իւր սուրբ, չինեալ ի վերայ առաքելոց և մարգարէից . . .», և որ ամենուրեք իր գովելի մասնակցութիւնը բերած է էքումէնիկ այս չարժումին, այս տարի ևս յանօրէն իր բաժինը բերաւ անոր :

Հաւաքոյթներուն բացումը կատարուեցաւ կիրակի, 19 Յունուար, երեկոյեան ժամը 6ին, Անկլիքաններու Սէյնթ Ճօրծ եկեղեցիին մէջ : Անդյերէն և Գերմաններէն լեզուներով կատարուած Ս. Գրական ընթերցումներէ և աղօթքներէ ետք, մասնակցողներէն իւրաքանչիւրը իր լեզուով արտասանեց Տէրունական աղօթքը : Մեր կողմէ ներկայ էր Հոգչ. Տ. Վահան Վրդ. Թօփալեան :

Յաջորդ օր, երեկոյեան ժամը 5ին, Միոն լերան Տորմիսիոններու վանքի եկեղեցիին մէջ կատարուեցաւ նմանօրինակ հաւաքոյթ մը : Եղան զանազան լեզուներով Աւետարանական ընթերցումներ, որոնց ընթացքին եկեղեցիներու միութեան զազափարքին չուրջ խօսեցաւ Հուտերականներու Փրօփսիթք՝ Հէլմութ Շմիթ : Մեր կողմէ ներկայ էին Հոգչ. Տ. Վահան Վրդ, Թօփալեան, որ Փրանսներէն լեզուով աղօթք մը արտասանեց, խոկ ժառանգաւոր սաներ խմբովին երգեցին «Գովիեա Երուսաղէմ զՏէր» յարութեան մաղթերդը :

Երեքարթի երեկոյ, Բնեթղեհէմի կէս ճամբուն վրայ գտնուող թանթուրի էկումէնական կեղբոնին մէջ կատարուեցաւ նմանօրինակ աղօթաժողով մը :

Չորեքշարթի, 22 Յունուար, երեկոյեան ժամը 5ին, Ս. Յակոբեանց Մայր Տաճարը լեցուած էր արդէն զանազան համայնքներու պատկանող ամէն սեռէ ու տարիքէ անձնաւորութիւններով : Բացումը կատարուեցաւ Յունարէն «Հայր մեր»ով, արտասանուած Արքմանստրիթ Քօրնէլիսու Ռօտուսաքիսի կողմէ : Ասպա, ժառանգաւոր սաներ երգեցին պատարագէն հատուածներ, ինչպէս նաև Ս. Ծննդեան Հոգեզմայլ չարականներ : Քարլ Շմիտ սարկաւագի կողմէ Գերմաններէնով կատարուած Հոովմայնեցոց Թուղթէն ընթերցումէ ետք Հոգչ. Տ. Հայկակեր Վրդ . Պայրամեան արտասանեց Ս. Գրիգոր Նարեկացիի հոգեշտուած աղօթքը՝ «Որդի Ասուուծոյ կենդանւոյ» : Ֆրանչիսկիան միարանութեան անդամ և Լատին համայնքի Հովիւ Հայր Տոմինիք Փէքի Արարերէն լեզուով կարդաց Յովհաննու Աւետարանէն համարներ : Անկլիքան Արքեպիսկոպոսարտ-

նի Երէցներէն Հայր Քլայլ Հէնտֆըրտ քարողեց Անգլերէն լեզուով, չեշտելով եկեղեցիներու միութեան և քրիստոնեաներու. Համագործակցութեան անհրաժեշտութիւնը մանաւանդ 20րդ դարու նիւթապաշտ ու անկերպարան այս օրերուն: Ժառանգաւոր սաներ վերստին երգեցին Ս. Ծննդեան մեղեդիներ, որմէ ևտք Ֆրանչիսկեան Հայր Իկնաղիօ Մանչինի Ֆրանսներէն լեզուով տուաւ իր փակման օրհնութիւնը:

Շարաթ, 25 Յունուար Երեկոյեան, սոյն շարժման մասնակցողները համախումբ ազօթք ընելէ ետք Ս. Յարութեան Տաճարին մէջ, ներկայ եղան Գողգոթայի վրայ կատարուած Յունաց կիրակմուտքի յատուկ Հսկումի արարողութեան:

Կիրակի, 26 Յունուար, վերջին օրն էր ազօթաժողովներուն: Զոյդ Հաւաքոյթներ փակեցին եկեղեցիներու միութեան եօթնեակը: Առաջինը կէսօրէ տուաջ ժամը 11ին, Ֆրանչիսկեաններու վանքի եկեղեցին մէջ, ուր բիւղանդական ծէսով մատուցուեցաւ պատարագ, Յոյն Կաթոլիկ եկեղեցիի բարձրաստիճան հոգեորականներէն մէկուն կողմէ, որ խօսեցաւ միութեան սրբագան զազափարին չուրջ:

Երեկոյեան ժամը 4·30ին, Շմիթ աղջկանց վարժարանի ընդորձակ սրբակ լեցուն էր ամէնազգի բազմութեամբ: Ազօթաժողով մը ըլլալէ աւելի՝ Հաւաքոյթը կոչուած էր կրօնական Երաժշտութիւն մատուցանելու քրիստոնէական տարբեր դաւանանքներու պատկանող Երդչախումբերու կողմէ՝ ներկայ Հասարակութեան:

Հանդէսը բացաւ Գոլէճի Տեսուչը, որմէ ևտք, երկու մասերէ բաղկացած ընդարձակ յայտագիր մը զործադրուեցաւ, ուր, յաջորդարար բեմ եկան Ֆրանչիսկաններու, Յոյն Արքար Ս. Յակոբ եկեղեցիի, Աւետարանականներու, Յոյն Օրթոսոքներու և Սրբոց Թարգմանչաց Երկը. Վարժարանի, Լուտերականներու և Ֆրէքներու դպրոցի Երդչախումբերը: Բարչ. Հրանդ Սարկաւագ մէներգեց «Ընտրեալդ Աստուծոյ» իսկ Տիկ. Շաքէ Գալայճեան՝ «Ասւրք, Սուրբ»: Երեկոյթին մէծագոյն անակնկալը եղաւ Հապէ Համայնքին մասնակցութիւնը: Երկու սարկաւագներ, մօտ քառորդ ժամ, ներկաներուն լարուած ուշագրութիւնը կեղքոնացուցին իրենց վրայ, իրենց եկեղեցին Երաժշտութեան ելեջներով:

Ս. Թարգմանչաց Երկսեռ Երդչախումբը հանդէս եկաւ ազդային երգեցով բուռն ծափահարութիւններ խլելով ներկաներէն, որոնք սրահէն մէկնեցան հոգեկան բաւարարութիւն ստացած մարդերու ուրախ հոգեվիճակով: